

Խ Ա Ղ Ո Ղ

Խաղողը լառաջացել է Նոյ Նահապետի մատուցած զոհի ոսկորներից, գետնի մէջ թաղելուց լետոյ:

ՎԱՐԳ ԵՒ ՄԱՆՈՒՇԱԿ

Վարդն ու մանուշակը քոյր և եղբայր են, որ միմեանց միշտ կարօտ են մնում: Եթէ մինը կարողանայ պահել մանուշակին և ցոյց տալ քրոջը՝ ինչ որ խնդրէ, անմիջապէս կը կատարուի:



Զ. ԳԼՈՒԽ

ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ՊԱԾՏԱՄՈՒՆՔ

Ա.

Թ Ռ Զ Ո Ւ Ն Ն Ե Ր



Ծ ի ծ Ե Ո Ն Վ Կ.

Վարանդայում թռչուններից ամենից աւելի ծիծեռնակըն է պաշտում: Շատ մեծ մեղք է համարում նրան սպանել և կամ նրա բունը քանդել: Ինչ գանգատում էր մի մարդ, թէ ուզում է տունը քանդել, նորոգել, բայց չի համարձակում, որովհետեւ տան հետ միասին պիտի քանդուի և՛ ծիծեռնակի բունը: Գանգատողը պնդում էր, թէ իւր հարեանի տունը հրդեհ էր ընկել և բոլոր երեխաներին ալբել, որովհետեւ տան երիտասարդներից մին անխոհեմութիւն էր ունեցել ծիծեռնակի բունը քանդելու:

Մի կին էլ գանգատում էր, թէ ծիծեռնակը բունը

շինել է օճախի անմիջապէս գլխին, այնպէս որ շատ անգամ կեղտոտում է կերակրները: Ո՛րքան և անախորժ էր այս բանը տնեցիներին, այնուամենայնիւ նրանք չէին համարձակուում քանգելու բունը:

Հաւատացնում են, որ շուշեցի Սէլրանենց Սահակը մեղք չհամարելով ծիծեռնակին վնաս հասցնել, մի անգամ բըռնել է մի ծեծեռնակ և լեզուն կտրել: Եւ այս է եղել պատճառը, որ նրա հինգ որդին էլ համը են ծնուել:

Երբ առաջին անգամ գալիս են ծիծեռնակները, մարդիկ և կանալք նրանց նայելով երեսներին խաչ են հանում. և առհասարակ երբ նրանք ճռուողում են, ասում են, թէ սաղմոս են քաղում, ժամ են ասում, օրհնում են մեզ և այլն:

Այսպէս պաշտելու մասին ասում են, թէ մի անգամ խալթող սողունները հաւաքուել են և խորհուրդ արել, թէ ո՞ր կենդանու արիւնը ամենից քաղցր է, որ առաւելապէս նրան խալթեն: Երկար վիճաբանութիւնից լետոյ մոծակին ուղարկում են, որ գնալ բոլորի արիւնն էլ փորձէ և ապա իրենց տեղեկացնէ: Սա գնում բոլորին խալթում և մարդու արիւնը ամենից քաղցր է գտնում: Երբ վերադառնում է իւր զեկուցումն անելու, ծիծեռնակն իմանալով այդ, յարձակուում է վերան և սպանում:

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է.

Մուկը ապաստան գտնելով Նոյի տասլանում, կրծեց և ծակեց տասլանը: Զուրը սկսեց ներս լցուել: Նոյ այս տեսնելով՝ բարկացաւ միև վրայ, որ գնաց մի անկիւնում թաք կացաւ: Յետոյ Նոյ առաջարկեց կենդանիներին, որ փակեն ծառը, սակայն ոչ ոք չկարողացաւ: Վերջապէս օձը ոլորուելով տարածուեց ծակի վրայ և ծածկեց այն: Երբ ջրհեղեղը անցաւ, Նոյ առաջարկեց օձին վարձատրութիւն խնդրել մատուցած ծառայութեան համար և սա հանելով իւր լեզուն, մարդու արիւնն ուղեց: Այդ ժամանակ ծիծեռնակը, որ Նոյի ոտի վրայ նստած էր, յարձակուեց և օձի լեզուն կծեց: Եւ այս է պատճառը, որ դեռ այժմս էլ օձի լեզուն

միջից կտրուած է: Օձն էլ իսկոյն յարձակուեց ծիծեռնակի վրայ, սակայն կարողացաւ միայն նրա պոչից կծել: Ուստի և՛ նրա պոչը երկուսի բաժանուեց: Օձի խայթած տեղից երկու կաթ արիւն ընկաւ, մինը Նոյի վրայ, որ անմիջապէս ոջիլի փոխարկուեց, միւսն էլ գետին, որ լու դարձաւ և թռաւ:

Ա Ղ Ա Ն Ի.

Սա էլ ծիծեռնակի պէս, բայց ոչ նրան հաւատար, պաշտուում է: Սրան ևս չեն սպանում և կամ վնաս հասցնում: Միայն թէ սրա մասին մի առանձին աւանդութիւն չի պատմւում, տարածուած են միայն ս. Գրքի մէջ պատմուածները:

Կ Ա չ Ա Ղ Ա Կ.

Պաշտուող թռչուններից է և՛ կաչաղակը, որի մասին պատմում են, թէ մի անգամ սա մի պառոււի տան գլխին նստած աւետում է նրան, թէ որդին օտարութիւնից գալիս է: Պառաւը առանց հասկանալու նրա աւետիքը, մի կտոր հաց է ձգում նրան: Նա իսկոյն տանում է այդ հացը և տալիս որդուն, որ սաստիկ քաղցած է լինում: Յետոյ վերադառնալով նոյն բանն է աւետում և մի կտոր հաց ևս ստանալով, խեղճ որդուն տանում: Այս բանը մի քանի անգամ կրկնւում է, մինչև որ պառաւը ձանձրանալով, մի քար է ձգում դէպի կաչաղակը: Սա էլ վերցնում է այդ, և տանում ձգում որդու գլխին: Որդին իսկոյն և եթ մեռնում է: Պառաւը գալիս է մեռած որդու մօտ և ճանաչում իւր ձրգած քարը: Այնուհետև այլևս քար չեն ձգում կաչաղակին, այլ միշտ հաց են տալիս ու խնդրում. «Բարին մեզ, չաբը թշնամուն»:

Պատմում են, թէ մի անգամ մի գիւղացի, մի կաչաղակի ոտներից մի քիչ յարդ է կապել և կրակ տալով՝ բաց թողել: Խեղճ թռչունը իսկոյն այլուել է: Ուղիղ մի տարուց յետոյ այդ միւսնոյն գիւղացու փոքրիկ աղջիկը իւր տափ տանը միայնակ եղած միջոցին, շորերը վառւում են և մինչ-

գեա նա վազում է տուն, կրակը լափում է նրան: Գիւղացին նոր գգում է իւր արած մեղքը և կրած պատիժը:

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Թոչուններ էլ կան, որոնք թէև չեն պաշտում, բայց որոնց մասին կան հետեւեալ աւանդութիւնները.

ՆՈՆԿՈՆ (կըկու).

Մի հարս ծառերից մի ճօճք է կապում, դնում իւր միակ երեխային մէջը և ինքը դնում քաղհան անում: Երբ մի քիչ լետով վերադառնում է, երեխային այլ ևս ճօճքի մէջ չի գտնում: Յաւից և սկեսուրի վախից թռչուն է դառնում և կուկու *) կանչելով պտրում իւր երեխային:

ԽԱՂՈՒԿ ԿԱՄ՝ ՍԱՆՐԱԿԱՒ (ԾՈՒԿՈՒԿ).

Սա մի հարս է եղել, որ մի անգամ թողել է խմորը կիսատ հունցած և սկսել է մազերը սանրել: Յանկարծ կեսուրը վրայ է հասել, և սա ամօթից ու վախից թռչուն է դառել, սանրը գլխին, և թռել:

ՆԱՔԱՆ.

Սա ժամանակով մի հարս է եղել: Մի օր, երբ սա խմոր է հունցել, սկեսուրը բարկացել է վերան, թէ ինչո՞ւ է պինդ հունցել. սա էլ դիմադարձութիւն է արել, ասելով թէ կակուխ է: Սկեսուրը բարկանալով անիծում է հարսին, որ իսկոյն կաքաւ է դառնում: Բայց մինչև այսօր էլ նա դիմադարձութիւն է անում սկեսրոջը, անդադար կրկնելով, թէ «Կակուղ ա, կակուղ ա»:

*) Վարանդայի գիւղերում երեխային կուկու են կանչում:

Բ Լ Ը Ո Լ Լ

Աստուած Ադամին ստեղծելուց լետոյ, երբ աեսաւ, որ միայնակ տխուր է, ասաց նրան, որ իւր համար մի զրոյց-ընկեր ընտրի և նա ընտրեց բուրբուլին: Սակայն այս անգամ էլ բուրբուլի ընկերը միայնակ մնաց և սկսեց տխրել, ուստի և՛ Աստուած ստեղծեց Եւային, և բլբուլին վերադարձրեց իւր ընկերոջը:

Պ Ղ Ո Լ Ղ Ո Լ Ս (Բուլճճ).

Մի պառաւ ունենում է Պօղոս անունով մի հատիկ որդի: Մի անգամ եկեղեցուց վերադառնալով՝ պառաւը երեխային մեռած է գտնում: Խփելով իւր գլխին, պառաւը խընդրում է Աստծուց որ իրեն թռչուն դարձնէ, որ և՛ կատարւում է: Եւ այդ օրուանից այդ խղճուկ պառաւը կանչում է իւր որդուն, Պղոջոս, Պուղոս, այն էլ գիշերները, որովհետեւ ոչ հանգիստ և ոչ էլ քուն ունի:

Ա զ Ո Ս Լ

Երբ Կայէնը սպանում է Աբէլին, Ադամ սկզբում կարծում է թէ քնած է, բայց երբ լետոյ հաւաստիանում է, որ մեռած է, պատանում է նրան և թաղում: Աստուած խըղճում է Ադամին, և ագռաւին ուղարկում, որ ասէ Աբէլին, թէ պատանդ մաշիր եկ: Սա էլ գնում է և փոխանակ այդ, ասում է, թէ «տապանդ մաշիր եկ»: Աստուած բարկանում է ագռաւի վրայ և անիծում, ասելով թէ բերանդ զրած եօթը պատառից մինը միայն կուլ գնալ: Եւ այդ է պատճառը, որ մարդիկ այդքան ատում են նրան և որ ագռաւը այնքան անկուշտ է, որովհետեւ եօթը պատառից միայն մինն է կուլ գնում:

Ա Ն զ Ղ.

Անգլիը ամենախմաստուն թռչունն է համարւում, որի համար և՛ նրան չեն «պանում» Նա շատ երկար է ապրում և միայն 700 տարեկան ժամանակն է ձու ածում և ձագ հանում: Պատմում են, թէ շատ հին ժամանակներում Հարուն-Ղարուն մի շատ հարուստ մարդ իւր ահագին հարքստութիւնը բարձում է ոչխարների վրայ և տանում մի սարի մէջ թաղում, ոչխարներին էլ մորթում: Սրա թողը իմանալով այդ հարստութեան մասին, կամենում է պտրել և գտնել, բայց բոլոր միջոցները 'ի գերեւ են ելնում: Վերջապէս մի իմաստուն մարդ խոստանում է անգղներից իմանալ տեղը և այս նստատեղով շատ ոչխարներ մորթել տալիս ու տարածում է մի դաշտի մէջ: Ինքն էլ մի քթոցի մէջ, գոմէշի ստամոքսով ծածկուելով թաք է կենում: Իսկոյն անգղները ամենայն կողմից հաւաքւում ուտում են ոչխարները. երբ կշտանում են, գնում իրենց պապին էլ են բերում, որ նա ևս կշտանալ: Երբ սա ևս կշտանում է, թռուները հարցնում են նրան, թէ ուրիշ անգամ էլ այդպէս կշտացել էր:

Մէկ էլ, տեսնում է պապը, Հարուն-Ղարունի ժամանակըն եմ կշտացել, երբ ոչխարներին բարձեց իւր ահագին հարքստութիւնը և տարաւ ան, այն սարի մէջ թաղեց և յետոյ էլ բոլոր ոչխարները կոտորեց:

Իմաստուն մարդը անմիջապէս դուրս է գալիս քթոցից, գնում փորում ցոյց տուած սարը և գտնում անթիւ հարքստութիւնը:

Հարուն-Ղարունի ժառանգը առաջարկում է իմաստունին իբրև վարձատրութիւն վերցնել հարստութեան մի մասը. սա էլ խնդրում է տալ այնքան, որքան կը կշռի մի մարդու գանգ: Սակայն Հարուն-Ղարունի բոլոր հարստութիւնը չի կարողանում կշռել մի մեռելի գանգ: Այս ժամանակ իմաստունն ասում է, թէ մի բուռն հող ածեցէք շոժարի միւս կողմը և երբ ածում ձեն, իսկոյն կշռում է: «Ահա, տեսնում

էք, ասում է իմաստունը, մարդու աչքը միայն մի բուռն հողը կը կշտացնի. այդ անբաւ հարստութիւնը բաւական չեն նրան, եւ էլ բացի այդ մի բուռն հողից, ուրիշ բան չեմ ուզում»:

Ձրջրթան կամ չափարծտի.

Մի անգամ Աստուած հրամայել է, թէ ով որ շուտով ինձ մօտ գայ, եւ նրան թռչունների թագաւոր կը նշանակեմ: Արծիւը իսկայն սկսում է թռչել դէպի երկինք, բայց ճանապարհին յօգնում է և ուզում է հանգչել. այս ժամանակ ձրջրթան կամ չափարծտին, որ նրա թևի տակ ապաստանած, հանգիստ բարձրանում էր, գուրս է թռչում և գնում Աստծու մօտ:

—Ի՞նչու եւ եկել, հարցնում է Աստուած այս փոքրիկ թռչունին:

—«Եկել եմ, որ թռչունների թագաւոր նշանակես ինձ», պատասխանում է չափարծտին:

—Դէհ, որ այդպէս է, ասում է Աստուած, գնա մի ճիպոտ բեր, որ ոչ կարճ լինի, ոչ երկար, ոչ ծուռ, ոչ ուղիղ:

Այդ օրից սկսած նա պտրում է չափարների (ցանկապատ) տակ ճիպոտներ, և երբ գտնում է՝ ասում է.

«Ձի, չի, էս չի. էն չի»:

Բ.

Մ Ի Զ Ա Տ Ն Ե Ր

Ա.

Մեղու, շերամ եւ որդան կարմիր.

Յոր երանելին որդունքը վերցրել գրել է վերքերի վրայ
ասելով. «Կերէք, կերէք, Աստուած ձեզ կերակուր է տուեր:
Որդերն էլ իսկայն փոխարկուել են մեղուի, շերամի և որ-
դան կարմիրի:

Բ.

Աստծու կողմ.

Աստծու կողմ կամ զատիկ կոչուած միջառը (БОЖЬЯ КО-
РОВКА) սուրբ են համարում և երբէք չեն սպանում:

Գ.

Ձ Կ Ն Ե Ր

Ձկների մասին ընդհանրապէս շատ քիչ աւանդութիւն-
ներ կան, երևի մեծ գետեր և լճեր, հետևապէս և՛ զանա-
զան տեսակ ձկներ չլինելու պատճառով:

Յայտնի է միայն՝

Օ ճ ա ճ ու կ ը.

Սա Գաբրիէլ հրեշտակի փողն է համարւում, որ լան-
կարծ ընկել է ջուրը: Ապացոյց՝ որ նրա վրայ կան 12 ծա-
կի հետքեր: Այս ձկները խմբով են շրջում, սրնգի ձայն հա-
նելով: Ձկնորսներն էլ ականջ են դնում, լսում սրնգի ձա-
յնը և ուռկանը ձգում, որսում:

Դ.

ՕՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Քեթիկ լերան վերայ, Վիպտակ հէօլս ուխտատեղում և Սխտորաշէնի ահագին չինարի ծառի մէջ կան մի մի ահագին օձ: Ծանապարհորդները անցնելով այդ ուխտատեղիների մօտով, դնում ուխտ են անում, մոմ վառում, աքաղաղներ զոհում, որպէս զի այդ օձերը պաշտպանեն իրենց և ճանապարհորդութեան ժամանակ օձերը չխալթեն իրենց: Զոհաբերութիւնների ժամանակ այս օձերը դուրս են գալիս և հանգիստ կերպով շրջում, ոչ մի վնաս չպատճառելով ուխտաւորներին:

Ուխտաւորները վերցնում են այդ օձերի շապիկների (խորխի) կտորները և պահում գլխարկների մէջ: Երբ օձ է պատահում, հանում այդ շապիկի կտորը ցոյց են տալիս: Հաւատացնում են, թէ օձը անմիջապէս լետ է քաշում և ոչ մի վնաս չի տալիս:

Ընդհանրապէս հայերը ոչ մի վնաս չեն հասցնում լուկին, մինչդեռ օձերին աշխատում են սպանել:

Պատմուն են, թէ մի անգամ մի հայ մարդ մի կատաշած ուղտի վրայ հրացան է արձակում, բայց հրացանը վրիպում է և ուղտը ընկնում է հայի ետեւից: Սա շունչը կտրուած ցատկում է մի ցանկապատից և ընկնում մի այգի: Այս միջոցին մի լոկ դուրս է պրծնում և խալթում, սպանում կատաշած ուղտին: Այնուհետև հայերը լուկին հայ են համարում, և նրա արած լաւութեան համար պաշտում:

Լոկը օձերի սափրիչն է համարւում, և երբ սկսում է սափրել մի որևէ օձի գլուխ, լանկաբժ մի հարուած է տալիս գլխին և անմիջապէս սպանում:

Լոկին բարկացնելիս ասում է. «Կը համբերեմ, չեմ կըծի, բայց եթէ կծեցի, միայն հաւի պանիր պիտի քսեք, որ առողջանար: Եւ որովհետև հաւի պանիր չկայ, ուստի լոկը սրանով ուզում է ասել, թէ իւր կծածը ոչնչով չի լաւանալ:

Այս է պատճառը, որ վարանդացիները երբէք չեն չարչարում և կամ սպանում լուկին, հաստատ գիտենալով, որ նա, իբրև հայ, իրենց չի կծիլ, այլ միայն թուրքին, իսկ երենց կծում է օձը, որ թուրք է և թուրքերին չի կծում: Եւ այս է պատճառը, որ թովչիները (ովսունչի) միայն թուրքերն են լինում:

Քառասնի գիւղից փոքր ինչ բարձր, մի բարձր ժայռ կալ, որ մի քիչ առիշեղ կտրուած է: Այդ կտրուած, տափաբակ տեղում, երկու թզենիների տակ ապրում է մի ոսկեղջիւր օձ, որ երբեմն իւր լուսաճաճանչ գլուխը դուրս է ցնցում ժայռից: Ասում են, որ եթէ մինը կարողանայ մի անգրավարտիկ ձգել նրա գլխին, այն ժամանակ օձը կը փութի, բայց կը թողնէ իւր ոսկի եղջիւրները, որոնք իմաստութիւն կը տան, ում մօտ էլ որ լինին:

Շատ տներ էլ օձեր կան, որ տան «գէօվլաթ» համարուելով՝ ոչ մի հալածանքի չեն հանդիպում: Տնեցիները ամանով կաթ են տալիս նրանց, որ խմելուց յետոյ ոսկիներ են ձգում ամանի մէջ:

Պատմում են, թէ մի մարդ միշտ կաթ է տուել իւր տան մի օձի և ամէն անգամ մի ոսկի ստացել: Մի անգամ այդ մարդը ուրիշ երկիր գնալու պատճառով որդուն է լանձնաբարում օձին կաթ տալ: Որդին տեսնելով օձի տուած քուրկին, մտածում է սպանել նրան և մի անգամից ստանալ նրա անթիւ ոսկիները: Հարուածը վրիպում է, օձի ագին կը տրրւում է և սա խալթում է տղին, որ միքիչ յետոյ մեռնում է:

Երբ հայրը վերադառնում է, իմանում է ամէն ինչ և շատ ցաւում: Մի ժամանակից յետոյ հայրը դուրս է հրաւիրում օձին, դնում է նրա առաջ մի աման կաթ և առաջարկում հաշտուել և առաջուալ պէս շարունակել: Սակայն օձը մերժում է կաթը և ասում. «Քանի որ ես տեսնում եմ իմ կտրուած ագիս և դու մտաբերում ես քո սպանուած որդին, մենք չենք կարող բարեկամներ լինել: Այս ասելով

օձը բոլորովին հեռանում է և կարճ միջոցում այս մարդը աղքատանում և թշուառանում:

Ծ.

Կ Ա Թ Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր

Այս կենդանիների պաշտամունքից բուն Վարանդայում նացել է միայն կատուին վերաբերեալ միքանի սնոտիապաշտութիւններ: Այսպէս՝ կատուն սուրբ է համարւում և նրան սալանողը եօթ եկեղեցի պիտի շինէ, որ կարողանալ այդ մեղքից ազատուել: Եւ եթէ այդ չի կարող անել, մեղքից թեթեւանալու համար զոնէ մի խալուար (ցորեն մաղելու մաղ) պիտի առնէ, յատկապէս դրկիցներին փոխ տալու:

Նրա մասին կան հետեւեալ աւանդութիւնները.

Կ ա տ ու .

Ա.

Քրիստոսին փշէ պսակով չարչարելիս, արցունքը լոր-գուլթեամբ հոսում էր և նա թաշկինակով սրբում էր: Մինը խլեց նրա ձեռքից թաշկինակը և գցեց աղբանոցը, ուր անմիջապէս կատուի փոխարկուեց:

Բ.

Մի անգամ Քրիստոս իբր մի հասարակ մարդ հիւր է լինում մի տան, մկները շատ նեղում են նրան և տնեցիներին: Այս ժամանակ նա ձգում է իւր թաշկինակը գէպի մըկները, որ կատու դառնալով՝ բռնում է նրանց:

Վարանդացիները պատմում և ուխտ են զնում միքանի կենդանիների պաշտաման տեղեր, որոնք թէև Վարանդայում

չեն գտնուում, սակայն նրան սահմանակից լինելով՝ այնքան էլ հեռու չեն:

Այսպիսի ուխտատեղիներից նշանաւոր են.

Ջանգեզուրի գաւառում, Տաթև վանքի հանդիպակած լեռնաշղթայի մէջ գտնուում է Եզան ուխտատեղին կամ ինչպէս սովորաբար թուրքերէն կոչում են՝ «Օկիւզ—զիարատ»-ը: Սա քարերի մի ահագին կոյտ է, որ օր աւուր աւելանում է, որովհետեւ ամէն մի անցորդ պարտաւորուած մի քար է բերում ձգում այդ կոյտի վրայ: Աւանդութիւնն ասում է, թէ այդտեղ թաղուած է մի եզ, որ ինքնակամ և առանց մարդու ճիպտի այդ տեղի քարհանքից ահագին քանակութեամբ քար է կրել Տաթևի եկեղեցին շինելու:

Այս ուխտատեղին նուիրական է ինչպէս հայերի, այնպէս և՛ թուրքերի համար:

Երբ կենդանիների մէջ տարափոխիկ հիւանդութիւններ են տարածուում, թէ հայերը և թէ թուրքերը բերում են կենդանիներ և՛ այդ քարակոյտի շուրջը երեք անգամ պըտըտեցնում: Եւ եթէ, հիւանդութեան սաստկութեան պատճառով, կենդանիներին բերել չեն կարող, գալիս, այդ քարակոյտի տակից մի բուռն հող են հանում և տանում, աղի հետ խառնում, տալիս հիւանդ կենդանուն: Շատ դէպքեր են պատմում, երբ կենդանիները անմիջապէս լաւացել են:

Խաչէնի Պտկսաբերկ հինաւուրց եկեղեցու մօտ թաղուած է մի արջ: Աւանդութիւնն ասում է, թէ այդ եկեղեցին շինելիս մի արջ շարունակ քար է կրել շրջակայքից: Երբ եկեղեցին աւարտել են, պահասել է միայն մի մեծ քար և այս արջը երկար որոնելուց յետոյ շատ հեռուում գտել է և շաւակած բերել: Երբ վայր է դրել քարը, վարպետը տեսել է, որ թոկը կտրելով արջի ուսերը՝ սաստիկ արիւնոտուել է, վերցնում է թոկը և խփում եկեղեցու պատին: Դեռ մինչև այժմ էլ ցոյց են տալիս այդ արեան հետքերը:

Յետոյ արջը օգնել է վարպետին քարը իւր տեղը դնելու, և երբ ամէն ինչ աւարտել են, շունչը փչել է: Վարպետը մեծ ցաւակցութեամբ ամփոփել է նրա մարմինը եկե-

դեցու մօտ և վերան քարեր դարսել: Ուխտաւորները մօմ են վառում այդ քարակոյտի վրայ և մատաղներ անում:

Ա ը Զ.

Սրա մասին կալ հետեւեալ աւանդութիւնը.

Արջը ժամանակով մարդ ջրադացպան է եղել. երբ շատ գողութիւններ է արել, Աստուած բարկացել է վրան և արջ դարձրել: Եւ ապացոյց սրան՝ երբ սպանում են արջին, սա առաջին թաթերը միմեանց վրայ դնելով՝ խաչում է:

* *

Բոլոր կենդանիները և բոյսերը լեզու ունին և կարող են խօսել: Որպէսզի մարդիկ կարողանան նրանց հասկանալ, պէտք է, որ շահմար օձը իւր լեզուն քաշէ մարդու բերանը: Այս բաղդին արժանացել են ովջի (օրսորդ) Փիրումը և Լօխմանին:

Է. ԳԼՈՒԽ.

ԼՈՒՍԱԽՈՐՆԵՐԻ ՊԱԾՏԱՄՈՒՆՔ

Արնւ Լու լուսին.—Վարանդայում գեռ մինչև այժմս էլ ծերունիներ և պառաւներ կան, որոնք պաշտում են արեգակը և լուսին: Շատ անգամ պատահում է, որ սրանք ծուներ են չորում նոր ծագող արեգակի և նոր նորող լուսնիակի առաջ և աղօթում նրանց այսպէս. «Աստծոյ ցնծուղն տուած ըրիզնակ, ալ մօրալ նոր ըլած լուսնիկեալ, իմ երեսս քո ոտանըդ տակը, դու իմ խոխէքս պահես: և այլն: Լուսնի նորին գրեթէ բոլոր գիւղացիները առաջին անգամ լուսնին նայելիս, միքանիսը բաղդաւոր համարուած երեսայի կամ մարդկանց երեսին են նայում, լուսալով, որ այդ ամիս բաղդա-